

**1919 թ. օգոստոսի 29-ի ՀԱՄԿԵԼ-ՈՒՍՈՒՊԲԵԳՈՎ «ՉԵԶՈՔ ԳՈՏԻ»
ԽԱՅՏԱՌԱԿ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

*Բանալի բառեր – Ալեքսանդր Խատիսյան, Ժորժ Կլեմանտ, Ուիլյամ Հասկել, Նա-
սիր բեկ Ուսուպբեգով, «չեզոք գոտի», Նախիջևան, Շարուր-Դարալազյազ, հայ-ադրբեջա-
նական հարաբերություններ*

1919 թ. օգոստոսին՝ Հայաստանի առաջին Հանրապետության տարած-
քում ծավալված մուսուլմանական պառակտիչ շարժումների ամենաբուռն
ժամանակաշրջանում, Հայաստանի կառավարությունը թուրք-թաթարական
բնակչությանը փորձեց սաստել դիվանագիտական ճանապարհով: Այդ առի-
թով ՀՀ վարչապետ և Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խա-
տիսյանը 1919 թ. օգոստոսի 9-ին հեռագրով դիմեց Փարիզի վեհաժողովի
նախագահ Ժորժ Կլեմանտյուն՝ նշելով, որ «ընթացիկ օգոստոս ամսի 15-ին
Բրիտանական զորքերը հեռանում են Անդրկովկասից և Էրզրումից: Թուրք-
թաթարական շարժումն արդեն սկսում է սպառնալ հայ ժողովրդի գոյու-
թյանը: Բրիտանական ուժերի ներկայությունը մասամբ զսպում է այդ շար-
ժումը: Նրանց հեռացումով անխուսափելի աղետ կսկսի: Ամբողջ հայ ժո-
ղովրդի գոյությունը վտանգի տակ է այն դեպքում, երբ դաշնակիցների հաղ-
թանակը Հայաստանին խոստանում էր ազատություն և կուլտուրական
կյանք: Մարդկային արդարության և Հայաստանի գոյության անունից պա-
հանջում եմ շտապ և եռանդուն միջոցների ձեռք առնում աղետից խուսա-
փելու համար: Հայկական կառավարությունը խորապես համոզված է, որ
դաշնակիցները իսկական միջոցներ կտրամադրեն իրենց որոշումները
պարտադրելու թուրք-թաթարներին»¹:

Չստանալով որևէ պատասխան՝ Ա. Խատիսյանը ֆրանսիական ռազմա-
կան առաքելության պետ, գնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյի միջոցով
երկրորդ անգամ է դիմում Ժ. Կլեմանտյուն. «Հայաստանի վրդովեցուցիչ
դրությունը ծանոթ է Փարիզի կոնֆերանսին, որը դեռ ոչինչ չի արել աղետի
առաջն առնելու համար: Հայկական կառավարությունը խորապես ցավում է,
որ միայնակ է թողնվել այն ժամանակ, երբ նրա գոյությունը սպառնալիքի

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 201, թ. 72ա:

տակ է դրված թուրք-թաթարական հորդանների կողմից, որոնք իրենց շարժումը զարգացնելով շրջապատում են Հայաստանը: Մուսուլմանական ապստամբներին ու զանազան բանդաներին միանալով՝ թուրք կանտոնավոր զորքերը սկսել են արդեն երեք կողմից հարձակվել Հայաստանի վրա և անցել են հայկական տերիտորիան: Հանուն հայ ժողովրդի՝ նրա կառավարությունը նորից խնդրում է Ձեր բարձր ժողովրդի՝ շտապ որոշում ընդունել հայ ժողովրդին ազատելու համար, որ համաձայնականների (Անտանտի – *Ս. Հ., Ս. Բ.*) դաշնակիցն է և նրանց հետ պայքար է մղել արդարության ու ազատության համար: Խնդրվում է ընդունված որոշման մասին անմիջապես հաղորդել մեզ» (այս և հետագա ընդգծումները մերն են – *Ս. Հ., Ս. Բ.*):¹

Փոքր Վեդիում, Դարալագյազում և Ջանգեզուրում շարունակվում էին հայերի համար ոչ նպաստավոր մարտական գործողությունները, գլուխ էին բարձրացրել նաև Կարսի, Օլթիի, Սուրմալուի տարածաշրջանների թաթարները, Հայաստան է ժամանում Փարիզի վեհաժողովի «Հինգի խորհուրդի» կողմից 1919 թ. հուլիսի 5-ին Հայաստանի գերագույն հանձնակատար (կոմիսար) նշանակված և Փարիզի խաղաղության կոնֆերանսի նախագահ Ժ. Կլեմանսոյի կողմից հաստատված ամերիկյան բանակի գնդապետ Ուիլյամ Հասկելը, որի նպատակն էր հետագոտել տարածաշրջանում տիրող ռազմական դրությունը, որոշել Միացյալ Հայաստանի ճշգրիտ սահմանները, Հայաստանի իրավագոր իշխանության պաշտպանության համար անհրաժեշտ օտարերկրյա զորքերի քանակը: Նա վստահ էր, որ իր ներկայությունը կսաստեր մուսուլմանական տարրերին, խոստանալով Ադրբեջանի կառավարությանը զգուշացնել, որ եթե սադրանքները շարունակվեն, ապա ծանր հետևանքներ կունենան ադրբեջանական նորաստեղծ պետության համար²: Փաստորեն, Փարիզի վեհաժողովն արձագանքել էր Անդրկովկասի հայ բնակչության և Հայաստանի Հանրապետության հուսահատ վիճակին:

Ու. Հասկելի առաքելությանը և նրան՝ որպես դաշնակից երկրների միասնական ներկայացուցչի տրված իրավասությունները մեծ հնարավորություններ էին ընձեռում հաղթահարելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին էթնիկ և քաղաքական թշնամանքը, որը հայ ժողովրդի լիովին բնաջնջման վտանգ էր պարունակում: Այդ առաքելության գործառույթներում էին ապահովել նաև Հայաստանի Հանրապետության տնտեսությունը վերականգնելու համար խաղաղ պայմանները և երաշխավորել այդ նպատակով անդրովկիանոսյան օգնությունը, համակարգել «Մերձավորարևելյան նպաս-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 201, թ. 77ա:

² Ու. Հասկելի գործունեության մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Հովհաննիսյան Ռ. Գ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. II, Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Երևան, 2014, էջ 231-244, **Махмурия Г. Г.**, Организационная, гуманитарная и политическая деятельность верховного комиссара союзников В. Гаскеля в Армении в 1919 г. // «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 49-75:

տամատույց» հիմնադրամի կողմից փախստականներին, որբերին և չքավորներին ցուցաբերվող օգնությունը, ինչպես նաև՝ որպես ամերիկյան և օգնություն ցուցաբերող այլ երկրների հիմնադրամների ներկայացուցիչ լինելը¹:

Ու. Հասկելի ժամանումը մեծ ոգևորություն առաջացրեց հայերի շրջանում: Ինչպես իտալական դիվանագիտական վավերագրերն են փաստում, Ու. Հասկելը, ի տարբերություն գեներալ Հարբորդի, որն այնքան էլ կողմնակից չէր ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնմանը, այն կարծիքին էր, որ ոչ միայն վերջինս, այլև եվրոպական մյուս տերությունները պարտավոր էին Հայաստանի օգտին գործել²:

Այդ էր պատճառը, որ Բաթումից, դրսեղ Ու. Հասկելը ժամանել էր օգոստոսի 14-ին, մինչև Երևան, ամեն տեղ՝ Ղարաքիլիսայում և Ալեքսանդապոլում նրան ցույց տրվեց խանդավառ ընդունելություն: Միմոն Վրացյանը տեղեկացնում է, որ 1919 թ. օգոստոսի 21-ի առավոտյան Ու. Հասկելը հասավ Երևան: Քաղաքն ամբողջովին զարդարված էր դրոշակներով, գորգերով և ծաղիկներով: Բոլոր խանութները փակ էին: Փողոցներում տիրում էր արտակարգ եռուզեռ վեհաժողովի ներկայացուցչին դիմավորելու համար: Զինվորական նվագախմբի ուղեկցությամբ կայարան էին եկել վարչապետ Ա. Խատիսյանը, բոլոր նախարարները, խորհրդարանի նախագահը, զինվորական հրամանատարական կազմը, Երևանի քաղաքագլուխը, թեմակալ առաջնորդը, ամերիկյան, անգլիական և ֆրանսիական պատվիրակները: Ընդունելության ծիսական մասը վարում էր մայրաքաղաքի պարետ Արշավիր Շահխաթունին³:

Ընդունելության արարողությունից, վարչապետի ողջույնի խոսքից, Ու. Հասկելի պատասխանից ու պատվո պահակի ընդունելությունից հետո շքախումբը սկսեց շրջել քաղաքում: Առջևից ազգային տարագով և դաշնակից պետությունների դրոշներով գնում էին Սասունի և Շատախի ձիավորները: Նրանց հետևից ընթանում էին Ու. Հասկելի, վարչապետի և մյուս դիմավորողների ինքնաշարժերը: Քաղաքային ինքնավարության շենքի առջև

¹ Այդ ընթացքում Ամերիկյան հացահատիկի կորպորացիայի միջոցով 41 հազար տոննա այլուր էր տեղափոխվել Հայաստան, ու ևս 51 հազար տոննա ուղարկել էր ամերիկյան օգնության տնօրինությունը: Բացվել էր 40 հիվանդանոց և 17 որբանոց: Ավելի քան 50 հազար երեխայի ամենօրյա սնունդ էր տրամադրվել: Ամերիկյան օգնության տնօրենության ղեկավարությամբ դաշնակից երկրների բարձրագույն կոմիսարի առաքելության՝ այս ընթացքում Հայաստանին տրամադրված ընդհանուր օգնության ծավալը կազմել է 108.000 տոննա: Դրա համար միջոցները տրամադրվել են կառավարական հասկացումներից և մասնավոր նվիրատվություններից: Տե՛ս «Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հ. Բ, 1918-1923»: Նյույորք հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց Արամայիս Բալոյանը, Երևան, 2010, էջ 109:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 320:

կանգնած էին որբերը՝ թարմ պսակներով: Աբովյան պողոտան լի էր անհամար բազմությամբ: Ու. Հասկելին հատկացված էր Երևանի լավագույն տներից մեկը, որի առջև կանգնած էին քաղաքագորը, անգլիական բանակի հնդիկ զինվորները և համքարություններն իրենց դրոշակներով¹: Երբ նա տեղ հասավ, նվագախումբը հնչեցրեց «Մեր հայրենիքը», հասարակությունը ողջունեց որոտընդոստ ծափերով ու «կեցցեներով»: Ու. Հասկելը դիտեց զորքը, հարց ու փորձ արեց նրա սպառազինության և հագուստի մասին, որից հետո զորամասերը հանդիսավոր քայլերթով անցան նրա առջևից:

Իրեն հատկացված բնակարանում ամերիկացի գնդապետն ընդունեց կառավարության, բանակի, քաղաքի և օտար պետությունների ներկայացուցիչներին, շնորհակալություն հայտնեց իրեն ցույց տրված ջերմ ու սրտաբաց ընդունելության համար: Ժողովուրդը, որը հավաքված էր նրա բնակարանի առջև, երկար ժամանակ չէր ցրվում:

Նույն օրը նեթ Ու. Հասկելը երկար տեսակցություն ունեցավ կառավարության նախագահի հետ, որին հաղորդեց, որ «**ինքը Վեհաժողովից հանձնարարություն ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր և գտնվեն նրանք՝ Հայաստանում, Ազրբեջանում, Թուրքիայում, թե Վրաստանում: Զինվորական օգնություն առայժմ չի կարող տալ, բայց արդեն Փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապես զորք հասցնել Հայաստան, այլև խնդրել է, որ անգլիական զորքերի մի մասը թողնվի Հայաստանում: Ինքը ամեն միջոց ձեռք կառնե պաշտպանելու համար Հայաստանի սահմանները և կպահանջի, որ Ազրբեջանի կառավարությունը վերջ տա գրգռիչ գործունեության Հայաստանի մուսուլմանականների մեջ: Ձեռք կառնի նաև կտրուկ միջոցներ, որ Հայաստանը ստանա զենք ու ռազմամթերք և որ վրաց կառավարությունը արգելք չլինի նրանց փոխադրությանը: Մասնավորապես, կաշխատի ապահովել Հայաստանի պարենավորման գործն ու մթերքի հայթայթումը»²:**

Ու. Հասկելը հավաստիացնում էր, որ ինքը Բաթումում էր թողել իր սպաներից մեկին՝ Հայաստանի համար ստացվող ապրանքները փոխադրելու համար, և որ շուտով այնտեղ էր հասնելու 7000 տոննա այլուրով բեռնավորված մի նավ, ապա տեղ կհասնեին պահածոներ, մսեղեն, դեղորայք, երկրագործական գործիքներ, մեքենաներ և այլն: Նա նշում էր, որ ԱՄՆ-ը դրամական օժանդակություն չէր կարող տալ, քանի որ Հայաստանի հոգատարության հարցը որոշված չէր, բայց ինքը հույս ուներ, որ ամերիկյան նպաստամատույց ընկերությունը կտրամադրեր մինչև 50 մլն դոլլար: Ու. Հասկելը հույս ուներ հայթայթել նաև զորքի, որբերի և գաղթականների հագնելիք և բանակի համար անհրաժեշտ 150 ջորիներ: Նա կարծում էր, որ մինչև ձմեռ արևմտահայերի ներգաղթն անհնար էր, բայց գարնանից նրանք

¹ Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 320-321:

² Նույն տեղում, էջ 321:

կարող էին վերադառնալ իրենց բնակության նախնական վայրերը: Ըստ Ու. Հասկելի՝ **Փարիզի վեհաժողովում Հայկական հարցի լուծումը որևէ կասկած չէր հարուցանում. վճռված-վերջացած խնդիր էր. մնում էր միայն որոշել սահմանները և հոգատար պետությունը**¹:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ին, Հայաստանի գերագույն կոմիսարը ներկա գտնվեց խորհրդարանի նիստին: Նախագահող Հովսեփ Արղությանը ողջունեց նրան ջերմ խոսքերով, իսկ Ու. Հասկելը հանդես եկավ պատասխան ճանով²:

1919 թ. օգոստոսի 23-ին Ու. Հասկելը շտապ մեկնեց Թիֆլիս, իսկ այնտեղից Բաքու՝ Ադրբեջանի կառավարության հետ Շարուր-Նախիջևանի հարցը կարգավորելու համար: Երկրի վարչապետ Նասիբ բեկ Ուսուպբեգովի և Արտաքին գործերի նախարար Մամեդ Յուսիֆ Ջաֆարովի հետ հանդիպելուց հետո Ու. Հասկելն առաջարկեց վերացնել հայ և մուսուլման ժողովուրդների միջև թշնամանքը, վերականգնել Անդրկովկասի և Պարսկաստանի միջև երկաթուղիային կապը և ամերիկյան վերահսկողության ներքո ստեղծել չեզոք գոտի: Ռիչարդ Հովհաննիսյանը նկատում է, որ ամերիկյան առաջարկը հայտնվեց մեկ շաբաթ անց՝ այն օրից, երբ Խոսրով բեկ Սուլթանովը Ղարաբաղի հայերին ստիպել էր ճանաչել իր գերիշխանությունը՝ դրանով մեծացնելով ադրբեջանցիների Ձանգեզուր մտնելու հավանականությունը: Ըստ Ռ. Հովհաննիսյանի՝ Երևանից հարավ մեծ չեզոք գոտու ստեղծումը կթուլացներ Շարուրի և Նախիջևանի նկատմամբ հայերի պահանջները և կարգելափակեր դեպի Ձանգեզուր Հայաստանի ճանապարհը՝ Ադրբեջանի համար ուղի հարթելով դեպի արևմուտք՝ Արաքսի հովիտը³:

Այդ առաջարկության հիման վրա, առանց Հայաստանի Հանրապետության հետ խորհրդակցելու, Ու. Հասկելը 1919 թ. օգոստոսի 29-ին՝ ուրբաթ օրը, Ադրբեջանի կառավարության նախագահ Նասիբ բեկ Ուսուպբեգովի հետ ստորագրեց Շարուր-Դարալագյազին և Նախիջևանին վերաբերող 21 կետից բաղկացած «Չեզոք գոտի» խորագիրը կրող մի համաձայնագիր, որն ամբողջությամբ հակասում էր Երևանում հայերին տված իր խոստումներին: Ըստ համաձայնագրի առաջին և երկրորդ կետերի՝ «Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներում անհապաղ պետք է հաստատվեր չեզոք գոտի», որի կառավարումը պետք է իրականացներ Ու. Հասկելի կողմից նշանակված ընդհանուր նահանգապետը:

Երրորդ կետով կազմակերպվում էր տեղական իշխանություն, որը պետք է լիներ թաթարական՝ բացառությամբ այն շրջանների, որտեղ հայերը մեծամասնություն էին:

4. Հայկական և ադրբեջանական կառավարություններն իրենց գործերն

¹ Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 321:

² Տե՛ս նույն տեղում, էջ 322-323:

³ Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 235:

անմիջապես պետք է դուրս հանեին չեզոք գոտուց, ընդ որում ոչ մի զինվորական միավորում չպետք է վերադառնար:

5. Հայկական և ադրբեջանական կառավարությունները չեզոք գոտուց անհապաղ ետ էին կանչում իրենց և այլ երկրների գործակալներին, որոնք կարող էին հրահրել տեղական բնակչությանը:

6. Ազրբեջանը և Հայաստանը հայտարարելու էին ընդհանուր համաներում, որը տարածվելու էր մինչև 1919 թ. սեպտեմբերի 1-ը մասնավոր անձանց դեմ կատարված հանցագործությունների վրա: Համաներումը չէր տարածվում այն հանցագործությունների վրա, որոնք արդեն գտնվում էին բրիտանական ռազմական իշխանությունների տնօրինության տակ:

7. Չեզոք գոտում տեղական պաշտոնատար անձինք կարող էին նշանակվել միայն ամերիկացի գեներալ նահանգապետի կողմից:

8-9. Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունները պետք է գործադրեին իրենց ամբողջ ազդեցությունը՝ հանգստացնելու համար հայ և թաթար ազգաբնակչությանը չեզոք գոտում, Երևանի և Զանգեզուր գավառներում:

10. Հայաստանի և Ազրբեջանի կառավարություններն իրենց հովանու ներքո կվերցնեն իրենց տարածքներում ապրող հայերի և թաթարների կյանքը և գույքը:

11. Անհապաղ վերականգնել Երևանից դեպի պարսկական սահմանը ձգվող և Շարուր-Դարալագյազով անցնող երկաթուղին և հեռագիծը: Երկաթուղին պետք է գործեր հայ և թաթար անձնակազմով և լիներ ամերիկյան գեներալ-նահանգապետի հսկողության տակ՝ թեպետ համարվելու էր հայկական երկաթուղու մաս: Այն պետք է սպասարկեր բնակչությանն առանց ազգային խտրության:

12. Ազրբեջանի կառավարությունը համաձայնում էր ամեն կերպ նյութարհանել ամերիկյան նպաստամատույց “Near East Relief” ընկերության պարենավորման և սնունդ տալու գործը Շուշիի և Զանգեզուրի շրջանների ազգաբնակչությանը:

13. Ազրբեջանական կառավարությունը համաձայն էր իրականացնել բոլոր միջոցները և տրամադրել փոխադրության ծախսերը Ազրբեջանում գտնվող բոլոր այն հայ գաղթականների վերադարձի համար, ինչը գեներալ-նահանգապետը կհամարի անհրաժեշտ:

14. Փոքր Վեդիի մուսուլման ազգաբնակչությունը ամերիկյան նահանգապետի ցուցումով պետք է այդ գյուղից վերաբնակեցվեր չեզոք գոտու տարածքում՝ իր համար նախատեսվող մեկ այլ գյուղում՝ հնարավորություն ունենալով տեղափոխել ամբողջ ունեցվածքը:

15. Բաքու-Ջուլֆա կառուցվող երկաթուղագիծը պետք է գտնվեր Բացառապես Ազրբեջանի կառավարության տնօրինության ներքո, և ոչ ոք չպետք է խառնվեր դրա կառուցման գործին:

16. Երկաթգծի երկայնքով Հայաստանի և չեզոք գոտու սահմանը պետք է լիներ այն վայրը, որը կոչվում էր Գայլի Դրունք:

17-21-րդ հոդվածները վերաբերում էին կառավարման համար հատկացվող հարկերի գանձման միջոցներին, անհրաժեշտության դեպքում ազրբեջանական կառավարության կողմից նախատեսվող ֆինանսական օժանդակությանը, դպրոցների, եկեղեցիների ամենօրյա գործունեության վերականգնմանը, խճի ազատության հաստատմանը և “Near East Relief”-ի կողմից առանց ազգային խտրականության պարենային օգնության տրամադրմանը¹:

Այսպիսով, «Հայաստանի գերագույն կոմիսար» գնդապետ Ու. Հասկելը, ընդառաջելով ադրբեջանցիների տեսակետը, Շարուր-Դարալազյազ-Նախիջևանի շրջանները հայտարարում էր վիճելի տարածքներ, որով, ըստ էության, Ղարաբաղ-Զանգեզուրը ևս տալիս էր Ազրբեջանին: Չեզոք գոտում Դարալազյազի ներառումը ծանր հարված կհասցներ Հայաստանի ռազմավարությանը: Այն կփակեր Երևանի ու Զանգեզուրի հաղորդակցության միակ ճանապարհը և Ադրբեջանին հնարավորություն կընձեռեր միջանցք բացել դեպի Արաքսի հովիտը²:

Փաստորեն, համաձայնագրով Զանգեզուրը, Նախիջևանը, Ղարաբաղը և Շարուր-Դարալազյազը հանձնվում էին Ադրբեջանին³: Այս ամենն այն դեպքում, երբ Փարիզի խաղաղության վեհաժողովի բացումից հետո ֆրանսիական կառավարությունը արգելել էր ադրբեջանական պատվիրակության մուտքը Ֆրանսիա, քանի որ Ադրբեջանը դիտարկվում էր որպես թուրքական ջանքերով ստեղծված պետություն, որն իբրև Օսմանյան կայսրության արբանյակ 1918 թ. կռվում էր դաշնակիցների դեմ: Միայն 1919 թ. գարնանը Ադրբեջանին թույլատրվեց մուտք գործել Ֆրանսիա և ներկայացնել իր երկրի շահերը⁴:

Ենթադրել կարելի է միայն, որ այս համաձայնագրի առանձին դրույթներ հետագայում հիմք դարձան Մոսկվայի խորհրդա-թուրքական 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի կնքման ժամանակ:

1919 թ. սեպտեմբերի 1-ին Ու. Հասկելը «Չեզոք գոտու» համաձայնագրի տեքստը երկու օրինակից ուղարկեց Հայաստան՝ մեկն առանց ուշացման ստորագրելու, իսկ մյուսը՝ որպես ի գիտություն պահելու համար: Համոզված լինելով, որ Հայաստանի կառավարությունը հավանության կարժանացնի և կհաստատի համաձայնագիրը, նա դրվատեց Ադրբեջանի ղեկավարների խաղաղասիրական կեցվածքը և հեռագրով դիմելով Ա. Խատիսյանին՝ առաջարկեց նրան դադարեցնել ռազմական գործողությունները հարավային ճակատում: Այս առիթով Ս. Վրացյանը գրում է, որ «հասկանալի է այն զար-

¹ Ավելի մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 6, գ. 11, թ. 46, 46 շրջ., 47, 47 շրջ., 51, ֆ. 275, ց. 5, թ. 19-24: Տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ «ԲՀԱ»), 1993, թիվ 1, էջ 116-119:

² Տե՛ս **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 236:

³ **Եփրիկյան Ա.**, Նախիջևանը 1917-1921 թթ., Երևան, 2016, էջ 137:

⁴ **Լեռ**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 408:

մանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երևանում, երբ ստացվեց Հասկելի կարգադրությունը՝ «առանց դանդաղելու ստորագրել և հետ ուղարկել» պայմանագիրը: Չկամություն ու թշնամանք փնտրելը Հասկելի քայլի մեջ անտեղի էր, իհարկե, այնքան բաց էր կատարված խաղը: Մարդը պարզապես զոհ էր իր անգիտությանը ու դյուրահավատությանը և Բաքվում լարված մեքենայություններին: Նրան ամեն կողմից ներկայանում էին թուրք պատգամավորություններ՝ գանգատով ու բողոքով Հայաստանի իշխանության դեմ. Ազրբեջանի կառավարությունը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թվեր, և խեղճ մարդը չգիտեր՝ ու՞մ հավատալ, ի՞նչ անել»¹:

Հայաստանի կառավարությունը հասկացավ, որ ամերիկացի հանձնակատարին մոլորեցրել էին իր պարզամտության պատճառով, և նա ի վիճակի չէր ստեղծելու անհրաժեշտ «modus vivendi» (իրար հետ կողք կողքի ապրելու համաձայնությունը):

Ու. Հասկելի գրությունը քննարկվեց Հայաստանի Հանրապետության խորհրդարանում ու կառավարության 1919 թ. սեպտեմբերի 3-ի և 6-ի նիստերում, և որոշվեց նրա մոտ ուղարկել մի հանձնախումբ՝ պարզելու համար եղելությունը²: Մինչ այդ Ու. Հասկելը Եվանգուլովին խնդրել էր թերթերում չհրապարակել իր ճառերն ու կարծիքներն իր գործունեության մասին³:

Սեպտեմբերի 5-ին Ա. Խատիսյանը, խորհրդակցելով դաշնակցության բյուրոյի հետ խորհրդարանում հայտարարեց, որ կառավարությունը, ըստ էության, դեմ չէր Նախիջևանի ամերիկյան նահանգապետության ստեղծմանը, որին սակայն հակադարձեց էսեռ Արշամ Խոնդկարյանը: Նա կառավարությանը մեղադրեց դաշնակիցներին կուրորեն հավատալու մեջ, որոնք չարաշահել են հայկական ժողովրդավարության վստահությունն ու զոհողությունները՝ ավելի մեծ ցավ ու տառապանք պատճառելով Հայաստանին: Ըստ Ա. Խոնդկարյանի՝ ժամանակն էր, որ Հայաստանի կառավարությունը վերանայեր իր արտաքին քաղաքականությունը և խուսափելով արևմուտքի փարիսեցիությունից՝ դեմքը շրջեր դեպի ռուսական դեմոկրատիան⁴: Նույնիսկ որոշ դաշնակցականներ հայտարարեցին, որ չնայած դաշնակիցները հաղթել էին պատերազմը և «համաշխարհային բախտի թելադրողն» էին, սակայն նրանք թույլ էին տալիս, որ Արևելյան Հայաստանի գերազանցապես հայաբնակ վայրերը, որոնք «հոգով-սրտով ձգտում էին դեպի նա», խլվեին Հայաստանի Հանրապետությունից⁵:

Սեպտեմբերի 6-ին Ա. Խատիսյանը և Ռ. Տեր-Մինասյանը մեկնեցին Թիֆ-

¹ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 324:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 119-121:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 175, թ. 55:

⁴ Տե՛ս «Նոր աշխատառ», 1919 թ. սեպտեմբերի 10, թիւ 187:

⁵ Տե՛ս «Նոր աշխատառ», 1919 թ. սեպտեմբերի 11, թիւ 188:

լիս, որտեղ մինչև սեպտեմբերի 14-ը վեց հանդիպում ունեցան Ու. Հասկելի և իր առաջարկությամբ այնտեղ ժամանած Նասիբ բեկ Ուսուպբեկովի հետ: Ըստ Ռ. Հովհաննիսյանի՝ նրանք Հասկելի առջև բարձրացրին Նախիջևանի՝ չեզոք գոտուն վերաբերող երեք հիմնական հարցեր, որոնք կարող էին իրենց ազդեցությունը թողնել Չանգեզուրի ապագայի վրա: Դրանք էին 1. «Չեզոք գոտու» կազմակերպումը և սահմանների հարցը. անհեթեթ էր «Չեզոք գոտու» մեջ ընդգրկել Դարալագյազը, որը Հայաստանի կազմում էր մնացել մինչև թուրքական զորքերի կողմից Արաքսի հովտի զավթումը; 2. «Չեզոք գոտու» հարաբերությունները Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների հետ. Հայաստանը պետք է ունենար արտոնյալ վիճակ «Չեզոք գոտու», քանի որ այդ տարածքը կենսականորեն կարևոր էր Հայաստանի Հանրապետության համար, և Ադրբեջանը, անտեսելով Փարիզի վեհաժողովի հրահանգները, հաճախակի խռովություններ էր հրահրում ու ֆինանսավորում տեղի մուսուլմաններին; 3. «Չեզոք գոտու» ազդեցությունը Չանգեզուրի ապագայի վրա. Չանգեզուրը եղել էր և պետք է մնար Հայաստանի կազմում. այն ընդունել էր անգլիացի զորավար Քոքին, սակայն անտեսվել էր Նասիբ բեկ Ուսուպբեկովի կողմից Ու. Հասկելին ներկայացված փոփոխված նախագծում¹:

Ա. Խատիսյանի և Ռ. Տեր-Մինասյանի բացատրությունները լսելուց հետո Ու. Հասկելը չեղյալ համարեց Նասիբ բեկ Ուսուպբեկովի հետ կնքած պայմանագրի՝ Ղարաբաղին ու Չանգեզուրին վերաբերվող կետերը: Բայց այս անգամ ևս Ադրբեջանը մերժեց ընդունել այդ համաձայնությունը: Ուսուպբեկովը անզիջում էր ադրբեջանական տարադրամի՝ բոնների գործածության և Բաքու-Չուլֆա երկաթուղու հարցերում: Մակայն Դարալագյազի պահով նա ընդունեց Հայաստանի իրավասությունը՝ պայմանով, որ դրա փոխարեն Օրդուբադի շրջանը նույնպես հանվի «Չեզոք գոտուց» և կառավարվի Ադրբեջանի կողմից:

Հասկանալի է, որ նման դիմումներն ու փաստերը պետք է որ ազդեին Ու. Հասկելի վրա, քանի որ նա ծանոթ չէր կովկասյան բարքերին:

1919 թ. նոյեմբերի 23-ի Խատիսյան-Ուսուպբեկով պայմանագիրը Շարուր-Նախիջևանի վերաբերյալ

Վերադառնալով Երևան՝ Ա. Խատիսյանը և Ռ. Տեր-Մինասյանը 1919 թ. սեպտեմբերի 14-ին կառավարությանը զեկուցեցին, որ Ու. Հասկելը, տեսնելով համաձայնագրի թերությունները, համաձայնել է այն տեսակետին, որ Չանգեզուրը Հայաստանի Հանրապետության անբաժան մասն է: Այդ է վկայում նրա կողմից թելադրված ինը կետանոց արձանագրությունը,

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 238:

ըստ որի՝ Ձանգեզուրում պահպանվելու էր «status quo»-ն, Դարալազյազը չէր ընդգրկվելու չեզոք գոտում, Բաքու-Ջուլֆա երկաթուղու շինարարությունը պետք է սկսվեր հայ-ադրբեջանական համաձայնությամբ:

Զիջելով Հասկելի ճնշումներին՝ Ադրբեջանի Արտաքին գործերի նախարար Մ. Յ. Ջաֆարովը հայտարարեց, որ իրենք չեն առարկի Շարուր-Դարալազյազում և Նախիջևանում չեզոք գոտու ձևավորմանը, և հոկտեմբերի 6-ին Հասկելին տեղեկացրեց, որ Ադրբեջանի կառավարությունը, չիրաժարվելով Շարուր-Նախիջևանի նկատմամբ իր իրավասությունից, չի մերժի ամերիկյան առաջարկությունը և Հայաստանի կառավարության նման ընդհանուր նահանգապետի ներկայացուցիչ կնշանակի Նախիջևանում¹:

Երկար բանակցություններից ու ձգձգումներից հետո Ու. Հասկելը պնդեց իր տեսակետը և Միացյալ Նահանգների բանակի գնդապետ, մասնագիտությամբ երկրաչափ Էդմոնդ Լ. Դեյլին նշանակեց Նախիջևանի նահանգապետ և կարգադրեց այնտեղ հաստատել ամերիկյան իշխանություն:

Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունները Ու. Հասկելին խոստացել էին տրամադրել երեքական ներկայացուցիչներ՝ Է. Դեյլի հետ Նախիջևան մեկնելու համար, բայց Ադրբեջանի կառավարությունը վերջին պահին մերժեց դա անել: Է. Դեյլին իր խմբով Երևանից դուրս եկավ հոկտեմբերի 24-ին: Նախիջևանում նրան ընդունեցին պատշաճորեն: Այդ մասին Ա. Խատիսյանը Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղղված՝ 1919 թ. նոյեմբերի 18-ի հեռագրում նշում էր. «Շնորհիվ Հասկելի միջամտության Ադրբեջանը արդեն ընդունել էր մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջևանի և Գոթթանի շրջանները պիտի կազմեին ամերիկյան նահագապետություն՝ չեզոք գոննա, մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական որոշումը Կովկասի մասին: ...Այս բոլորիս Նախիջևանում է գտնվում ամերիկյան նահանգապետը, բայց նա բոլորովին անգոր է: Չնայած ամերիկացիների կտրուկ հրամաններին և սպառնալիքներին, Նախիջևանի թրքությունը տաճկական սպաների ղեկավարությամբ, զինված թնդանոթներով և գնդացիքներով, արդեն մի շաբաթ է, որ Դարալազյազի հայության հետ կռիվ է մղում, աշխատելով անցնել դեպի Ձանգեզուր և անմիջական կապ ստեղծել Ադրբեջանի հետ»²:

Երկկողմ բանակցությունների արդյունքում 1919 թ. նոյեմբերի 23-ին Հայաստանի և Ադրբեջանի վարչապետներ Ա. Խատիսյանի և Նասիբ բեկ Ուսուպբեգովի, ինչպես նաև ամերիկացի գնդապետ Ջեյմս Ռեյի և Վրաստանի Արտաքին գործերի նախարար, ժամանակավոր նախագահ Եվգենի Գեզեչկորիի միջև Թիֆլիսում կնքվեց պայմանագիր, ըստ որի՝

1. Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պարտավորվում են

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 239-240:

² Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 139:

վերջ դնել թշնամական գործողություններին և այլևս չդիմել զենքի:

2. **Խաղաղ ապրանքափոխանակությունը զարգացնելու համար Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները համաձայն են ընդունել իրական միջոցներ Ձանգեզուրով ձգվող ճանապարհը վերանորոգելու և բացելու ուղղությամբ՝ ապահովելով Ձանգեզուրով անցնող ճանապարհի անվտանգությունն ու հուսալիությունը:**

3. Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պարտավոր են լուծել բոլոր վիճելի հարցերը, այդ թվում՝ սահմանների հարցը խաղաղ բանակցությունների ճանապարհով: Եթե այն լինի անիրականանալի, որպես իրավարար կողմ ընտրել որևէ չեզոք երկրի, որի կայացրած որոշմանը կհամաձայնեն ենթարկվել երկու կառավարությունները: Ընդ որում, ներկա դրությամբ հիշատակվող չեզոք կողմը ԱՄՆ-ի բանակի գնդապետ Ջ. Ռեյն է:

4. Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պարտավոր են անհապաղ հաստատել հավասար թվով պատվիրակներ, որոնք պետք է հանդիպեն նոյեմբերի 26-ին Բաքվում հրավիրված կոնֆերանսում և շարունակեն կոնֆերանսը Թիֆլիսում՝ դեկտեմբերի 4-ին: Խաղաղության կոնֆերանսում կքննարկեն բոլոր այն հարցերը, որոնք տարաձայնությունների և հակամարտության առիթ են դառնում՝ դրանց տալով հարցերի կարգավորման իրավասություն պայմանագրի և արբիտրաժի միջոցով:

5. Պայմանագիրը երեքական օրինակից՝ անգլերեն և ռուսերեն, ուժի մեջ է մտնում կնքման պահից՝ նոյեմբերի 23-ից¹:

Սակայն ամերիկյան նահանգապետությունն իրական փոփոխություններ չմտցրեց իրավիճակում: Նախիջևանը փաստորեն մինչև 1920 թ. ամառ մնաց ինքնավար, և ինչպես Ա. Խատիսյանը կասեր՝ «կարող ենք սպառուած համարել (Դաշնակիցներու) դերը Կովկասի և մասնաւորապէս, Հայաստանի մէջ»²:

Այսպիսով, Նախիջևանի «Չեզոք գոտու» հիմնախնդիրը և Նախիջևանից Սյունիքով Ադրբեջան տարանցիկ միջանցք բացելու գաղափարը արևմտյան ծրագրեր էին, որոնք 1919 թ. օգոստոսի 29-ի համաձայնագրից և նոյեմբերի 23-ի պայմանագրից հետո այսօր՝ 102 տարի անց՝ Հայաստանի երրորդ Հանրապետության հետպատերազմյան ժամանակաշրջանում, նորից փորձ է արվում գործողության մեջ դնել և իրականացնել:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 35-36, տե՛ս նաև «Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հ. Բ, 1918-1923», էջ 74-75:

² Տե՛ս **Խատիսյան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 164:

**Ավետիս Հարությունյան, Արշակ Բալյան – 1919 թ. օգոստոսի 29-ի Հասկել-
Ուսուպրեզով «Չեզոք գոտի» խայտառակ համաձայնագիրը և
Հայաստանի Հանրապետությունը**

1919 թ. ամռանը Հայաստանի կառավարությունը թուրք-թաթարական բնակչության պառակտիչ շարժումները սաստելու ներքին հարցը փորձեց լուծել դիվանագիտական ճանապարհով: Այդ առիթով ՀՀ վարչապետ և Արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը 1919 թ. օգոստոսին հեռագրով երկու անգամ դիմեց Փարիզի վեհաժողովի նախագահ Ժ. Կլեմանսոյին: Շուտով Հայաստան ժամանեց Փարիզի վեհաժողովի «Հինգի խորհուրդի» կողմից 1919 թ. հուլիսի 5-ին Հայաստանի գերագույն հանձնակատար նշանակված և Ժ. Կլեմանսոյի կողմից հաստատված ամերիկյան բանակի գնդապետ Ուիլյամ Հասկելը: 1919 թ. օգոստոսի 23-ին Ու. Հասկելը մեկնեց Բաքու Ադրբեջանի կառավարության հետ Շարուր-Նախիջևանի հարցը կարգավորելու համար: Առանց Հայաստանի Հանրապետության հետ խորհրդակցելու, նա 1919 թ. օգոստոսի 29-ին Ադրբեջանի կառավարության նախագահ Նասիբ բեկ Ուսուպրեզովի հետ ստորագրեց Շարուր-Դարալագյազի և Նախիջևանին վերաբերող 21 կետից բաղկացած «Չեզոք գոտի» խորագիրը կրող մի համաձայնագիր, որն ամբողջությամբ հակասում էր Երևանում հայերին տրված իր խոստումներին: Համաձայնագրով Ջանգեզուրը, Նախիջևանը և Շարուր-Դարալագյազը հանձնվում էին Ադրբեջանին: Ու. Հասկելի գրությունը քննարկվեց ՀՀ խորհրդարանում ու կառավարության 1919 թ. սեպտեմբերի 3-ի և 6-ի նիստերում: Արդյունքում 1919 թ. նոյեմբերի 23-ին Հայաստանի և Ադրբեջանի վարչապետներ Ա. Խատիսյանի և Ն. Ուսուպրեզովի, ամերիկացի գնդապետ Ջեյմս Ռեյի և Վրաստանի Արտաքին գործերի նախարար և ժամանակավոր նախագահ Ե. Գեգեչկորու միջև Թիֆլիսում կնքվեց պայմանագիր:

**Аветис Арутюнян, Аршак Бальян – Позорное соглашение Хаскелла-Усуббекова
«Нейтральная зона» от 29 августа 1919 г. и Республика Армения**

***Ключевые слова** – Александр Хатисян, Жорж Клемансо, Уильям Хаскелл, Насиб-бек Усуббеков, «Нейтральная зона», Нахичеван, Шарур-Даралагыз, армяно-азербайжанские отношения*

Летом 1919 г. правительство Армении пыталось дипломатическим путем решить внутренний вопрос об осажении раскольнического движения турецко-татарского населения. В связи с этим в августе 1919 г. премьер-министр и министр иностранных дел РА А. Хатисян телеграммой обратился к председателю Парижской мирной конференции Ж. Клемансо. Вскоре в Армению прибыл полковник американской армии Уильям Хаскелл, который 5 июля 1919 г. был назначен «Советом пяти» Парижской мирной конференции и утвержден Ж. Клемансо в качестве верховного комиссара Армении. 23 августа 1919 г. У. Хаскелл отправился в Баку для урегулирования с правительством Азербайджана вопроса о Шаруре и Нахичеване. Не обговорив этот вопрос с правительством Армении, 29 августа 1919 г. он подписал с председателем правительства Азербайджана Насиб-беком Усуббековым соглашение, носящее название «Нейтральная зона» и включающее в себя 21 пункт о Шарур-Даралагязе и Нахичеване. Соглашение полностью противоречило его обещаниям, данным армянам в Ереване. По соглашению Зангезур, Нахичеван и Шарур-Даралагыз переходили Азербайджану. Документ был обсужден в парламенте РА на заседаниях правительства 3 и 6 сентября 1919 г. В результате 23 ноября 1919 г. между

премьер-министрами Армении и Азербайджана А. Хатисяном и Н. Усуббековым, американским полковником Джеймсом Реем и министром иностранных дел и временным председателем правительства Грузии Е. Гегечкори был подписан договор.

Avetis Harutyunyan, Arshak Balyan – Haskell-Usubbeyov Disgraceful “Neutral Zone” Agreement as of August 29, 1919 and the Republic of Armenia

Key Words – Alexander Khatisyan, Georges Clemenceau, William Haskell, Nasib bey Usubbeyov, “Neutral Zone”, Nakhichevan, Sharur-Daralagez, Armenian-Azerbaijani relations

In the summer of 1919, the Armenian government tried to resolve the internal issue of suppressing the divisive movements of the Turkish-Tatar population through diplomacy. On that occasion, RA Prime Minister and Minister of Foreign Affairs A. Khatisyan twice addressed a telegram to the President of the Paris Assembly G. Clemenceau in August, 1919. Soon after that, U.S. Army Colonel William Haskell, who was appointed High Commissioner of Armenia on July 5, 1919 by the “Five Councils” of the Paris Assembly approved by G. Clemenceau, arrived in Armenia. On August 23, 1919, W. Haskell left for Baku to settle the Sharur-Nakhichevan issue with the Azerbaijani government. On August 29, 1919, without consulting the Republic of Armenia, he signed a “Neutral Zone” Agreement consisting of 21 Articles on Sharur-Daralagez and Nakhichevan with the Prime Minister of Azerbaijan Nasib bey Usubbeyov, which completely contradicted his promises given to Armenians in Yerevan. According to the Agreement, Zangezur, Nakhichevan and Sharur-Daralagez were handed over to Azerbaijan. W. Haskell's comprehensible note was discussed in the RA Parliament and the Government sittings of September 3 and 6, 1919. As a result, an Agreement was signed between the Prime Ministers of Armenia and Azerbaijan, A. Khatisyan and N. Usubbeyov, American Colonel James Ray, Minister of Foreign Affairs and Interim President of Georgia E. Gegechkori on November 23, 1919 in Tbilisi.

Ավետիս Հարությունյան – Խ. Արսևյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու (avharutunyan@mail.ru)

Արշակ Բալյան – ԵՊՀ հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (bal.arshak@mail.ru)

Ներկայացվել է 17.09.2021

Գրախոսվել է 27.09. 2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021